

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հեղինե Բիշարյանի, Մհեր Շահգելոյանի և Հովհաննես Մարգարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-551-18.06.2014-ՖՎ.-010/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, օրենքի նախագիծը բխում է աուդիտորական գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտը կատարելագործելու, միջազգային չափանիշներին մոտարկելու անհրաժեշտությունից, որը համապատասխանում է նաև աուդիտի ոլորտում իրականացվող քաղաքականությանը:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ օրենքի նախագծով առաջարկվող աուդիտորների մասնագիտական պատասխանատվության պարտադիր ապահովագրության

պահանջի սահմանումը ներառում է բազմաթիվ ռիսկեր, որոնց զսպման մեխանիզմներն անհրաժեշտ է ամբողջությամբ կարգավորել օրենքի նախագծով: Անհրաժեշտ ենք համարում նաև մինչև օրենքի նախագծի ընդունումը մանրամասն ուսումնասիրել ապահովագրական ընկերությունների կողմից այդ ռիսկերի ստանձնման և վերաապահովագրման հնարավորությունները, ատոլիտորական ընկերությունների կողմից առաջարկվող ծառայությունների գնի վրա ազդեցությունը և այլն: Միաժամանակ՝ անհրաժեշտ է նախատեսել դրույթներ առողիտ իրականացնող անձի կողմից պարտադիր ապահովագրության պայմանագիր չկնքելու համար պատասխանատվության, պարտադիր ապահովագրման ենթակա ռիսկերի տեսակների, ապահովագրական գումարի նվազագույն չափի, ինչպես նաև ապահովագրության պայմանագրի նվազագույն պայմաններ սահմանելու վերաբերյալ և այլն:

Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է պարտադիր առողիտ իրականացնելու դեպքում առողիտ իրականացնող անձի պարտականությունը՝ ապահովագրելու իր գործունեության արդյունքում երրորդ անձանց գույքային վնաս պատճառելու հետևանքով առաջացած իր պատասխանատվությունը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածով սահմանված է, որ այն դեպքերում, երբ որոշակի անձանց վրա օրենքով պարտականություն է դրվում ապահովագրել այլ անձանց հանդեպ ունեցած իրենց պատասխանատվությունը, ապահովագրությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կանոններին համապատասխան՝ պայմանագրի կնքելու միջոցով, ընդ որում, ապահովագրողների համար այդ պայմանագրի կնքումը պարտադիր չէ: Այս տեսանկյունից առաջանում է հակասություն, քանի որ ստացվում է այնպես, որ առողիտորը պարտավորվում է իրականացնել իր մասնագիտական պատասխանատվության ապահովագրությունը, իսկ ապահովագրական ընկերությունը կարող է հրաժարվել

դրանից: «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված է, որ պարտադիր ապահովագրության իրականացման դեպքերը, կարգը և պայմանները սահմանվում են օրենքով, հետևաբար, պարտադիր ապահովագրության նոր տեսակի սահմանումը պահանջում է առանձին օրենքով լիարժեք կարգավորում, օրինակ, ինչպես սահմանված է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Հաշվի առնելով այն, որ օրենքի նախագծով ապահովագրական ընկերությանը վերապահված չէ ապահովագրական պայմանագիր կնքելու պարտականություն, առաջարկում ենք խմբագրել օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետը:

Բացի դրանից, օրենքի նախագծի 1-ին հոդվածի «մասնագիտական պատասխանատվության ապահովագրում» հասկացության և օրենքի նախագծի 2-րդ հոդվածի միջև առկա է անհամապատասխանություն: Մասնավորապես, օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսված հասկացությունը ներառում է բացառապես աուդիտորի մասնագիտական գործունեության արդյունքում երրորդ անձանց պատճառված գույքային վնասի համար առաջացած պատասխանատվության ապահովագրությունը, իսկ օրենքի նախագծի 2-րդ հոդվածը, բացի նշված պատասխանատվության ապահովագրությունից, նախատեսում է նաև աուդիտորական ծառայություններ մատուցելու մասին պայմանագրի խախտումից առաջացած պատասխանատվության պարտադիր ապահովագրություն:

Օրենքի նախագծից անհրաժեշտ է հանել 2-րդ հոդվածի 2-րդ մասը, քանի որ այդ մասով նախատեսված պատասխանատվության հետ կապված հարաբերություններն արդեն իսկ կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածով:

Միաժամանակ առաջարկում ենք օրենքի նախագծով հստակեցնել աուդիտի ենթարկվող անձի իրավունքները՝ աուդիտ իրականացնող անձի կողմից ոչ որակյալ ծառայություններ մատուցելու հետևանքով կրած վնասները փոխհատուցելու հարցերում:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ անհրաժեշտ է նախատեսել անցումային դրույթներ՝ պարտադիր ապահովագրություն ունենալու պահանջն ուժի մեջ մտնելու հետ կապված հարաբերությունները կարգավորելու համար:

Ելնելով շարադրվածից՝ առաջարկում ենք օրենքի նախագիծը լրամշակել՝ այն հետագայում օրենքների նախագծերի փաթեթով շրջանառության մեջ դնելու համար՝ պարտադիր ապահովագրության նոր տեսակի սահմանումն առանձին օրենքով լիարժեք կարգավորելու նպատակով: Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնությունն ընդունելի կհամարի ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վախթանգ Միրումյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ
Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ
իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության
գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված
կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**

«Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը
առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Աուդիտորական գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Աուդիտորական գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Եզրակացություն

«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է աուդիտ իրականացնող անձանց մասնագիտական պատասխանատվության ապահովագրմանը, ինչը կարող է նպաստել աուդիտորական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագրի խախտումից և (կամ) աուդիտորական գործունեության իրականացման արդյունքում երրորդ անձանց պատճառած վնասների նվազեցմանը*: Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվի**, եթե աուդիտ իրականացնող անձանց պարտադիր ապահովագրության ներդնումը տնտեսվարող սուբյեկտների համար ֆինանսական ծախսերի էական ավելացման չհանգեցնի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունմամբ նախատեսվում է ներդնել աուդիտ իրականացնող անձանց մասնագիտական պատասխանատվության ապահովագրության ինստիտուտը:

Նախագիծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է սահմանել աուդիտորի մասնագիտական գործունեության արդյունքում երրորդ անձանց պատճառված վնասների համար նյութական պատասխանատվություն և դրա ապահովագրման պահանջ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ապահովագրական վճարները ապահովագրական ընկերությունների համար համարվում են հարկվող եկամուտներ, իսկ ապահովագրվող աուդիտորական ընկերությունների համար՝ շահութահարկով հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող ծախսեր և միաժամանակ, ապահովագրական հատուցումները ապահովագրական ընկերությունների համար համարվում են շահութահարկով հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող ծախսեր, իսկ ապահովագրվող աուդիտորական ընկերությունների համար՝ հարկվող եկամուտներ՝ գտնում ենք, որ նախագծի ընդունումը պետական բյուջեի եկամուտների վրա էական ազդեցություն չի ունենա, իսկ ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-551-18.06.2014-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ՝ հետեյալ բովանդակությամբ՝ մասնագիտական պատասխանատվության ապահովագրում- աուդիտորի մասնագիտական գործունեության արդյունքում երրորդ անձանց պատճառված վնասների համար նյութական պատասխանատվության ապահովագրում:

Հոդված 2. Օրենքը լրացնել նոր 18¹ հոդվածով՝ հետեյալ բովանդակությամբ՝

Հոդված 18¹ Աուդիտ իրականացնող անձանց մասնագիտական պատասխանատվության ապահովագրումը

1. Աուդիտ իրականացնող անձն իրավունք ունի, իսկ պարտադիր աուդիտ իրականացնելու դեպքում պարտավոր է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով ապահովագրել աուդիտորական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագրի խախտումից եւ (կամ) աուդիտորական գործունեության իրականացման արդյունքում երրորդ անձանց գույքային վնաս պատճառելուց առաջացած իր պատասխանատվությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքերում աուդիտ իրականացնող անձը կրում է նյութական պատասխանատվություն: Աուդիտորական կազմակերպության աուդիտորի կողմից աուդիտ իրականացնելու դեպքում աուդիտն իրականացրած աուդիտորը եւ այն աուդիտորական կազմակերպությունը, որին վերջինս ներկայացնում է, կրում են համապարտ նյութական պատասխանատվություն:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

Աուդիտորական գործունեությունը կարգավորող օրենսդրության, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայումս հատուկ կարեւորություն է ստանում պարտադիր աուդիտը, որը տնտեսավարող սուբյեկտների իրական ֆինանսական վիճակի վերաբերյալ շահագրգիռ անձանց հավաստի տեղեկատվություն տրամադրելուն ուղղված հիմնական միջոցներից է: Վերջինիս կապակցությամբ պարտադիր աուդիտը ձեռք է բերում հանրային-իրավական նշանակություն, ինչն էլ թույլ է տալիս եզրակացնելու, որ այն անձանց, որոնք իրականացնում են պարտադիր աուդիտ, պետք է ներկայացվեն հատուկ պահանջներ: Օրենքով սահմանված դեպքերում տնտեսավարող սուբյեկտներին անցկացնում են պարտադիր աուդիտ: Վերջիններս ելնում են աուդիտ իրականացնող անձանց արհեստավարժության եւ նրանց տրամադրած աուդիտորական եզրակացության հավաստիության եւ ճշգրտության կանխավարկածից, սակայն նման պայմաններում տնտեսավարող սուբյեկտը ապահովագրված չէ աուդիտ իրականացնող անձանց կողմից թերանալու հետեւանքով վնասներ կրելու կամ ոչ ճիշտ տեղեկատվության տիրապետելու ռիսկից: Մատնանշված ռիսկը կանխելու կամ դրա բացասական

հետեւանքները վերացնելու քաղաքակիրթ եղանակներից ենք համարում, մասնավորապես, պարտադիր աուդիտ իրականացնող անձանց պատասխանատվության պարտադիր ապահովագրումը: Ապահովագրության պայմանագիրն այս դեպքում հանդիսանում է աուդիտ իրականացնող անձի պատասխանատվության ֆինանսական ապահովման ձեւ:

Աուդիտ իրականացնող անձանց պատասխանատվության ապահովագրումը տարածված է բազմաթիվ երկրներում եւ հաճախ պարտադիր պայման է հանդիսանում: Օրինակ, աուդիտորական գործունեության ապահովագրմանը մեծ ուշադրություն է հատկացվում Շվեդիայում: Աուդիտորներն ու աուդիտորական կազմակերպությունները պետք է կնքեն ապահովագրական պայմանագրեր եւ Աուդիտորական գործունեության հարցերով հանձնաժողովին գրավ վճարելն ի ապահովումն աուդիտորական գործունեության ընթացքում կրած վնասների հատուցման պարտավորության կատարմանը:

Իսպանիայի օրենսդրությամբ աուդիտ իրականացնող անձինք անձնական եւ համապարտ պատասխանատվություն են կրում աուդիտի ենթարկվող անձանց առջեւ աուդիտորների կողմից իրենց պարտավորությունները չկատարելու հետեւանքով պատճառած վնասի համար: Եթե վնասը պատճառվել է աուդիտորական կազմակերպությունում աշխատող աուդիտորի կողմից, ապա պատասխանատվություն է կրում ինչպես աուդիտորը, այնպես էլ աուդիտորական կազմակերպությունը: Այն հիմնադիր աուդիտորները, որոնք չեն ստորագրել աուդիտորական եզրակացությունը, պատճառված վնասի համար կրում են միայն սուբսիդիար պատասխանատվություն:

Այսպիսով, ապահովագրության առկայությունը թույլ է տալիս վնասների հատուցման բեռը դնել ապահովագրական կազմակերպությունների վրա, ինչը գործարար ոլորտում լայն տարածում ստացած երեւոյթ է, քանի որ սխալների եւ բացթողումների արդյունքում պատճառված վնասը կարող է լինել շատ էական, իսկ վնաս պատճառողը հաճախ չունի սեփական միջոցների բավարար քանակ այդ վնասը հատուցելու համար: Հետեւաբար, ահրաժեշտ է ներգրավել այլ ֆինանսական միջոցներ: Իսկ դա հնարավոր է միայն ապահովագրության ինստիտուտի շրջանակներում, քանի որ ապահովագրական ընկերությունները ապահովագրման եւ վերաապահովագրման միջոցով ի վիճակի է կրելու բավական խոշոր ռիսկերի պատասխանատվություն: Ապահովագրության միջոցով լուծվում է միաժամանակ երկու խնդիր. մի կողմից, աուդիտ իրականացնող անձն ապահովագրում է իրեն տնտեսավարող սուբյեկտին կամ երրորդ անձանց պատճառած վնասի հատուցմամբ պայմանավորված նյութական կորուստներից, մյուս կողմից, ապահովում է տուժողներին հասանելիք հատուցման ստացումը:

Աուդիտորական գործունեության արդյունքում վնաս կարող է պատճառվել ինչպես աուդիտի ենթարկվող տնտեսավարող սուբյեկտին, այնպես էլ երրորդ անձանց, եւ ապահովագրության պայմանագրով պետք է հաշվի առնել նաեւ այդ հանգամանքը: